բանաւ ուսելով պաղոյն գիտութեան բարւոյ և չարի՝ մահու մեռանիցիս. այս եղև միայնակ պատճառ և արդարութիւն դատողութեան, որ իջուց բնութիւնս մեր 'ի բարձրութենէ առ 'ի խոնարհութիւն, 'ի տէրութենէ առ 'ի հնազանդութիւն, 'ի անմահութենէ առ 'ի վախճան կենաց՝ սպասելով հատուցումն գործոյն յանդգնութեան մերոյ ընդունիլ դատաստան 'ի հանդերձելումն և վճիռ յաւիտենական. այսքան բաւական լիցի բարեպէս ընթերցողաց, զի 'ի միտս իւրեանց հաստատուն պահեսցեն, զի պահել զպատուիրանս արժան է, զի տայ տեղի ընդունելոյ երջանկութիւն երևելոյ 'ի վերայ երկրի, որպէս արար Տէր մարդն բանական և փառաւոր և հնազանդ միայն Տեառն Աստուծոյ ամենակարողին և արարչին իւրոյ։

Եւ մի՛ լիցի՝ զի սղալանօք յիշեցուցանեմք մեք 'ի մէջ մտաց մերոց թէ բարկութիւն Աստուծոյ եղև 'ի վերայ բնութեան մարդոյ, զի ոչ պահելով զպատուիրանն Տեառն, արտաքսեաց զմեզ 'ի դրախտէն, կամ խէթ ընդ մեզ պահելով՝ թոյլ ետ ծօվու զի իշխեսցէ 'ի վերայ երկրի և ջնջեսցէ բնութիւնս մեր 'ի վերայ երկրի, քաւ լիցի, այլ անդրադարձ սորայ որպէս գրէ սուրբ մարգարէն Դաւիթ, որ ոչ ըստ մեղաց մերոց արար մեզ Տէր և ոչ ըստ անօրէնութեան մերում հատոյց մեզ, այլ զոր ինչ եկն 'ի վերայ